ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

Ամսագիր. (31 տարի)

(Վերսկսել է «Դաշնակցական Հանդես» անունով)

Ինչո՞ւ ենք մենք ընդդիմադիր

Ինչո՞ւ ենք մենք ընդդիմադիր։ Ինչո՞ւ ենք մենք ընդդիմանում ներկա կառավարությանը։ Ինչո՞ւ ենք մենք ընդդիմանում ներկա կառավարության ներքին ու արտաքին քաղաքականությանը։ Ինչո՞ւ ենք մենք ընդդիմանում ներկա կառավարության տնտեսական ու ֆինանսական քաղաքականությանը։ Ինչո՞ւ ենք մենք ընդդիմանում ներկա կառավարության ռազմական քաղաքականությանը։ Ինչո՞ւ ենք մենք ընդդիմանում ներկա կառավարության ամբողջ քաղաքականությանը։

Ահա հարցեր, որոնք ամեն օր ու ամեն ժամ կարող են հնչել մեր ականջներում։ Ահա հարցեր, որոնք ամեն օր ու ամեն ժամ կարող են հնչել մեր ընկերների ու համակիրների շրթունքներից։ Ահա հարցեր, որոնք ամեն օր ու ամեն ժամ կարող են հնչել մեր հակառակորդների շրթունքներից։ Ահա հարցեր, որոնք ամեն օր ու ամեն ժամ կարող են հնչել մեր ամենաչեզոք դիտողների շրթունքներից։

ծառուբեանը պ. Թէմուրազեանցի հետ համամիտ է, բայց և հակառակ էլ չէ, եթէ ձաշերից յետոյ նշանակած դասերը նոր դասեր կը լինին, այսինքն պարոնը ուզում էր, որ եթէ, օրինակի համար, օրական 5 դաս կայ, երեքը դասախօսեն առաւօտեան, իսկ 2 ձաշից յետոյ:

Պ. Բէգնազարեանցը յայտարարում է թէ՝ չը նայելով Եւրոպայի մանկավարժական աշխարհում առաջադրեալ հարցի առթիւ կազմուած երկու միմեանց հակառակ կուսակցութեանը Լիւբէնի վիճակագրական տեղեկութիւնները պատասխանին, որ այդ երկու կուսակցութեանց մէջ գրեթէ ոչինչ տարբերութիւն չը կայ, թէ ձաշից յետոյ պարապողներն էլ ու չը պարապողներն էլ միևնոյն հետևանքին են հասնում: Մասնաւորելով իւր խօսքը մեր ուսումնարանների վերայ՝ պ. Բէգնազարեանցը խորհուրդ է տալիս պարապել ձաշերից զինի այն տեղերում, որտեղ միայն կարելի է և գիւղերի մօտաւորութիւնը կամ գիւղական սովորութիւնը, ազատութեան ազատ ժամերը այդ բանին արգելք չեն լինում: Պ. Թաթիսեանի առաջարկութեան այն մասին թէ ձաշերից յետոյ աշակերտները գործնական դասերով պարապին, պ. Բէգնազարեանցը իսրտէ համակրում է, բայց համոզուած լինելով որ մեր վարժապետները հարկաւոր եղած զարգացումը չունին զարմանում է թէ ինչի մեր ժողովներում երբեմն այնպիսի հարցեր են արծարծում, որոնք սկզբունքով թէև լաւ և դիտելիք են, բայց և միևնոյն ժամանակ անիրագործելի: Ես ձեզ կարող էի, շարունակեց պ. Բէգնազարեանցը, այսպիսի հարիւրաւոր հարցեր և սկզբունքներ առաջարկել, որոնց համար իսկոյն գուք ինձ կը ծափահարէիք, բայց ձեզ ինչ օգուտ այդ հարցերից, երբ որ գուք նրանց չը պիտի կարողանաք իրագործել:

Պ. Բունիաթեանցը ձաշերից յետոյ պարապելը անյարմար է գտնում նամանաւանդ օրիորդների համար: Պ. Շահբուդաղեանը գտնում է, որ մի ուսուցիչ առաւօտները 5 ժամ պարապելից յետոյ, այլևս չի կարող ձաշերից վերջն էլ արդիւնաւոր կերպով պարապել: Պ Ղուկասեանցը պաշտպանում է Շահբուդաղեանցի միտքը և աւելի ընդարձակում է նրան: Պարոնը գտնում է, որ մեր ուսումնարանների յառաջադիմութեան համար շատ ու շատ բնական են առաւօտեան պարապմունքները միմիայն, այնուհետև թող ուսուցչը պարապի աշակերտաց գրաւոր աշխատութիւնները աչքից անցկացնելու և միւս օրուայ դասերը պատրաստելու: Առաւօտները հինգ ժամ շարունակ պարապելումը պ. Ղուկասեանցը ոչինչ վնաս չի տեսնում նոյն իսկ աշակերտաց համար, նէթէ որ աւելի մտաւորական լարած դրութիւն պահանջող գասերը առաջին ժամերումը նշանակվին, իսկ մնացորդը, ինչպէս կար, երեկոյդութիւն, վերջին ժամերում:

Պ. Սպանդարեանը առաջարկում է հարցը չձգձգել և նրանից չշեղուիլ, այլ ուղղակի դիմել նրա վճռաւելուն: Նախագահը քուէարկում է և ժողովը ձայների ահագին մեծամասնութեամբ բացասում է ձաշերից յետոյ պարապելու առաջարկութիւնը: Ժամը $9^1/_2$ ժողովը գոցուեցաւ:

Ի ՊԱՏԻՒ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՑԱՑԱԾ ՁԱՇԸ:

Սեպտ. 5-ին, կէսօրուայ 2-րդ ժամին, տեղի ունեցաւ ուսուցչական ժողովին համակրող թիֆլիսի հասարակութեան տաւած հայկերոյթը: Ըօլօնիայի «Ընրօպա» կոչուած այգիի ընդարձակ դահլիճի մէջ երկու հարիւրից աւելի մարդկանց համար փառաւոր սեղան էր սարքած, դահլիճի պատերին փակցրած էին քառակուսի տպագրած թերթեր հետևեալ վերնագրով. «Առաջին ընդհանուր ուսուցչական ժողով Հայոց թիֆլիսում, 1882», իսկ սեղանի վերայ ամեն մի տպասի առաջ, կերակուրների անուններուի ցուցակը, տպագրած ոսկէ տառերով: Ժամը $2^1/_2$ էր և 207 հոգի սեղանի նստան: Դրանք էին հոգևորականներ (որոնց թիւում և Սահակ ու Մեսրոպ վարդապետները), ուսուցիչներ, ուսուցչուհիներ, գաւառական ուսումնարանների հոգաբարձութիւնների պատգամաւորներ, տեղական հայ մամուլի և թատրոնի ներկայացուցիչներ և թիֆլիսի հայ հասարակութեան ընտիր անդամներից շատերը:

«Արգանակը» վայելելից յետոյ, կարգադրիչ յանձնաժողովի և սեղան նի նախագահ բժշկապետ Մինքայէլ Շահպարոնեանցը ոտքի կանգնելով առաջարկեց բաժակ ի կենդանութիւն Թագաւոր կայսեր: Մի ակնթարթում բոլոր ձաշողները ոտքի կանգնեցին և միահամուռ ձայնով դղրդացրին դահլիճը երկարատև «ուռա»յով, որից յետոյ զինուորական նուագածուները «Боже царя храни» ուռա-աղբերգային երգը ածեցին: Միևնոյն ոգևորութեամբ և նոյնպէս ոտքի վերայ ընդունվեցաւ նախագահի առաջարկած երկրորդ բաժակը ի կենդանութիւն Նորին Ցմութեան Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին: «Մարէ» երգից յետոյ, որ Ղազարոս քահանայի միջնորդութեամբ ձայնաւոր ուսուցիչները երգեցին, պ. Շահպարոնեանցը առաջարկեց բաժակ ի կենդանութիւն մեր երկրի կառավարչապետ իշխան Դոնդուկով-Ցօրսակովին: Նուագածուները ածեցին «Մարիցա» բոլգարացոց ազգային երգը: Բուռն կեցցէներով վերջացաւ և այդ Թանգագին առաջարկութիւնը:

Այնուհետև պ. Շահպարոնեանցը մի ձշգրիտ հայեացք ձգելով հայ ուսումնարանի անցեալի վերայ և ցոյց տալով թէ՝ խելօք գիւղացի ուսուցիչը ի՛նչ գնդեցիկ գործեր կարող է առաջացնել հայ գիւղերում, առաջարկեց խմել բոլոր ուսուցիչների կենացը: Պ. Բարխուդարեանցը հանգիսականներին ծանօթացնելով կարգադրիչ յանձնաժողովի և նրա նախագահի անձնուէր գործունէութեան հետ, ուսուցչական ժողովը կայացնելու վերաբերութեամբ, առաջարկեց դրանց կենացը խմել, որ և ոգևորութեամբ ընդունվեցաւ: Ցետոյ կարգադիր յանձնաժողովի փոխ-նախագահ պ. Եւանգուլեանցը մի առնախօսութեամբ բացատրելով ուսուցչական ժողովի վերաբերութեամբ պ. Բարխուդարեանցի արած ծառայութիւնը, առաջարկեց բաժակ պ. Բարխուդարեանցի կենացը և սա իրան օգնական պէս՝ Մանդինեանի և Ջիգիանեանի կենացը:

Այնուհետև հեղհեղուկ գատարկվեցան բաժակներ ի կենդանութիւն պատգամաւորների, Կ. Պօլսի սրբազան Պատրիարքը Ներսէս եպիսկոպոսի, Խրիմեան Հայրիկի, «Մեղու», «Մշակ» և «Արձագանք» լրագիրների և ցոյց «Կարժարան» և «Գործ» ամսագիրների խմբագիրների, և մասնաւորապէս պ. Սպանդար Սպանդարեանի, Տաճկաստանի հայ մամուլի և ուսուցիչների, ուսուցչական ժողովին մասնակցող Տաճկաստանից եկած ուսուցիչներ պպ. Խիւեճեանի, Մելքոնեանի և Փորթուգալեանի, տիկին Բարայեանի և օր. Գայիանէ Ջուհանեանի, ուսուցչական ժողովի համար օրհնակելի դարոց կազմող պ. Սալամբէգեանի, Թիֆլիսի և գաւառական հայ հասարակութեանց և ուրիշ մասնաւոր անձանց, իթիս որոց և ռուսական «Կավկազ» լրագրի խմբագիր իշխան Երիստովի, որի ձայնին պատասխանեց ժողովականների կողմից պ. Երիցեանը, և երբ իշխան Երիստովը բաժակը ձեռին մանր գալիս սեղանների շուրջը իրան համար եղած սիրացոյցերը ընդունելու, ուսուցիչները վրացական «Մրավալժամի» երգն էին երգում:

Առաջարկված ամեն մի բաժակին առհասարակ հետևում էին համաոտ ատենախօսութիւններ, որոնցից մի քանիսի ղլխաւոր պարունակութիւնները, որքան մենք կարողացանք լսել, կ'աշխատանք միւս անգամ մէջ բերել:

Հաճութեամբ սրան այստեղ պէտք է յիշենք իշխան Նատօլէօն Ամատունու առաջարկութիւնն յանուն առաջին ուսուցչական ընդհանուր ժողովը Թիֆլիսի Ներսիսեան և Գայանեան դպրոցներում մի-մի որբեղբայր պահելու մասին, որպիսի որբեղբայրութեանց ծախսը, ասաց իշխանը, հէնց այժմեանից կարելի է ժողոված համարել:

Ի վերջոյ պ. Երիցեանցը մի հայկական ձառից յետոյ, ի կողմանէ ուսուցչական ժողովին (!) և հայ մանկտոյն, իբրև հաւատարիք դրանց անմոռաց երախտագիտութեանը, երկու դափնեայ պսակներ տուեց պպ. Բարխուդարեանցին և Շահպարոնեանցին, որոնք զգացված սրտով ընդունեցին այդ Թանգագին նուէրը: Ըը մոռանանք յիշել, որ ձաշի վերջոյ ծափակայ փնջեր բաժանվեցին ներկայ եղող բոլոր ուսուցչուհիներին և վարժուհիներին:

Ժամի $6^1/_2$-ին ձաշը վերջացաւ, բայց չը նայելով անձրևային եղանակին, ժողովականները մնացաւոր խմբերի բաժանված՝ զինուորական և տեղական նուագածուների և երգիչ ուսուցիչների քաղցր և ներդաշնակ ձայների ու երգերի աղդեցութեան տակ գեռ երկար ժամանակ ուրախանում և զուարճանում էին այդիում, որտեղից յետոյ գուրս գալով՝ ժողովականները թատրոն գնացին, որը նոյնպէս այդ երեկոյին տրվում էր ի պատիւ ուսուցչական ժողովին:

Պատիւ թիֆլիսի հասարակութեանը, որ գիտեցաւ իւր քաղաքի որմերի տակ հաւաքված հայ մատաղ սերնդի առաջնորդողներին այդպէս սիրաշահել և մեծարել:

Կ'անցկենայ սեպտեմբերի 15 ը, կը գրուի հայ ուսուցչական ժողովը և նրա ամեն մի անդամը իւր հետ կը տանի այդ օրուայ աղ ու հացի քաղցր միշատակը. «Հացի կարածը Թուրը չի կարիլ», ասում էն, ընթերցող, հայկական տաճը և մենք ատարակոյս ենք, որ սեպտ. 5-ի ճաշը մի գեղեցիկ օրինակ և առհաւատչեայ կը լինի թիֆլիզցիների և գաւառաբնակ հայերի մէջ, ինչպէս գպրոցական, նոյնպէս և միւս գործերում նոյնպիսի եռանդով և համերաշխութեամբ աշխատելու:

***

ՅԱՐԳՈՑ ԹՄԲԱԳԻՐ.

«Մեղուի» № 88 ում տպուած Աշտարակից Ցա—եմ ստորագրութեամբ նամակի առթիւ աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել. նամակի մի նշանաւոր մասը նուիրուած էր Աշտարակին, որով յօդուածագիրը մեզադրում է թեմ. վերատեսչի օգնականին և մասամբ աշտարակցոց, որ նրանք թոյլ են գտնուել ուսումնարանական գործերում և այլն:

Բայց ես իմ կողմից այսքան կարող եմ ասել, որ պ. յօդուածագիրը լաւ չէ կարողացել ծանօթանալ մանրամասնութեանց հետ, կամ ձշմարտութիւնից խուսափում է նա, որովհետև գեռ սրանից առաջ Աշտարակը ունէր երկու բարեկարգ հոգ. դպրոցներ, որոնք հասատատուն քայլերով համարեա երկաթարի չարունակ յառաջ էին գնում, և մօտ 160—180-ի աշակերտող երեխայք ունէին, և հետևարար չատ յաջող կերպով առաջ գնալով ժամանակին արդիւնաւոր պատղներ պէտք է տային, եթէ չնորհիւ մի քանի անբարեխիղճ աղաների չը բացուէր մի այլ դպրոց ու չը ծանրաբեռնէր ժողովուրդը, չ'ըսպառէր նրա ոյժը:

Այս աղաներն էին, որ համոզեցին տգէտ ժողովրդին (իսկ փոքր իշատէ հասկացող դասը նրանց կուսակից էին) բանալ մի ուրիշ իրը աւելի պիտանի գպրոց, համոզելով նոյնպէս, որ այն «պիտանիւթ դպրոցը ապահոված է իրենց աչխէն մի նիւթական ծանրութիւն չը կայ, այլ իբրև մի վերին չնորհ պէտք է վայելին աշտարակցիները. բաւական է հասարակ ժողովրդին այսպիսի մի բան ասել, որ նա այնուհետև իւր անձը նուիրէ, բայց ափսոս, որ վերջը բոլորովին հակառակը դուրս եկաւ: Ուսումնարանի նիւթական կառավարութեան դժուարութիւնը ժողովրդի վերայ ընկաւ, որի կառավարչն նրա ոյժից չատ բարձր էր, հետևաբար չը կարողանալով օրինաւոր կերպով կառավարել թէ իրեն հոգ. և թէ այն միւսը, այսօր ամենաանհանգիստ դրութեան մէջ են գտնվում երկու դպրոցներն էլ, և (ժողովուրդը) աշտարակցիները համարեա կրթութիւնից զուրկ են այս րոպէիս:

Թող իմանան մեր աղաները, որ աշտարակցոց այն ժամանակ աւելի բարիքներ արած կը լինէին, երբ բոլորովին չը միջամտէին նրանց ուսումնարանական գործերում, այլ թողած լինէին ժողովրդի իրեն ինքնակառավարութիւնը, որով ժողովուրդը աւելի օգտուէր, աւելի խոհեմ պիտի գործէր քան թէ մեր «աշխոյժ» աղաները, իսկ եթէ ցանկանում էին աշտարակցոց բարիքն ու յառաջադիմութիւնը և կամենում էին կրթութեան գործը աւելի մեծ քայլերով առաջ տանել, թող այն ժամանակ մեր հեղինակաւոր աղ. աւելի ոյժ տային մեր արդէն պատրաստի հոգ. դպրոցին, բարւոքէին նրա վիճակը թէ նիւթապէս և թէ բարոյապէս, գտնէին զանազան միջոցներ աղբիւրներ, որը չատ պիտի էր իրենց համար, որով ապահոված կը լինէին դպրոցի ապագան:

Ուրեմն այս բոլորը չէն արել մեր աղաները. նրանք արել են այն, ինչ որ խոչընդոտ է եղել հոգ. դպրոցի յառաջ գնալուն. նրանք են եղել միտգամայն սկզբնապատճառը բոլոր չարեաց, եթէ նրանք ուսումնարանական գործերում հակառակն չը գործէին, հարկաւ ժողովուրդը կուսակցութեան չէր բաժանվիլ և այսօր այս՛տեսակ պատկերը չէր ներկայացնիլ Աշտարակը. խեղճ ժողովուրդը վերջ ի վերջոյ սթափվեցաւ քընից, նա իմացաւ իրեն արած անխոհեմ քայլը և ընդ նմին գալոց վտանգը, բայց արդէն ուշ էր: Ահա մեր այն առաջնորդները, որոց երեսին է նայում և այս րոպէիս 500 տուն Աշտարակը և ընծից սպասում է նա իւր մատաղ սերունդի կրթութիւնը:

Թիֆլիզ. 28 օգոստ. Պ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդօնից սեպտ. 4-ից պաշտօնապէս հաղորդում են, որ այդ օրը անձնատուր են եղել անպայման Արաբին և Տուլբան: Այդ գիշերը անգլիական հեծելազօրքը առաւ Կայրօն, և գիպտական տեղապահ գօրքը զինաթափ եղաւ. անգլիացիները ապստամբութիւնը վերջնականապէս ճնշած են համարում:

—Խեդիվը գնում է Կայրօ: Արաբի-փաշայի և նրա գործակիցների վերայ գատաստան է լսվում:

—Անգլիական «Daily News» թերթը անհնարինութիւն է համարում, ինչու թէ Անգլիան մտագրութիւն ունենար կարգադրելու եգիպտական գործերը առանց ուշադիր լինելու միւս տէրութիւնների չահերին և կարծիքներին:

—Արաբի և Տուլբա փաշաները իրանց սրերը Լօու գէներալին յանձնեցին: Կայրօում կարծում են, որ Փաֆրա-Դաւարը սեպտ. 5-ին վերջնականապէս անգլիացոց ձեռքը կ'անցնի:

—Անգլիացոց յաղթութիւնների առթիւ տաճկները չատ գոհունակ են: Միւս կողմից սահմանագծի պատճառով յունաց հետ եղած տարաձայնութիւնը մեծ յուզմունք է պատճառում Կ. Պօլսի մէջ:

—Յոնը հնդկացի հարկատու իշխանների անգլիական տէրութեանը առարկեցին իրանց գօրքերը և ծնդանօթները, որպէսզի օգնեն Եգիպտոսի արշաւանքի յաջողութեանը:

—Անգլօ-տաճկական դաշնագրութեան առթիւ Անգլիոյ թագուհին և սուլթանը մի քանի անգամ հեռագրական բա-

ԺԳԺՎԱՆ ԺԱՂՈՎ

Հայոց Ներսիսեան Հոգեւոր Ճեմարանի 1-ին տարւոյ վարժարանական ճեմից ընդհանուր ժողովոյ նախագահ Գ. Ալիխանեան

Հոգեւոր Ճեմարանի Ներսիսեան Հոգեւոր Ճեմարանի 1-ին տարւոյ վարժարանական ճեմից ընդհանուր ժողովոյ նախագահ Գ. Ալիխանեան

* * *